



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԼԱՆՋԱՂԲՅՈՒՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

20.01.2012թ.

գ. Լանջաղբյուր

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

Տեղի ունեցավ Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր համայնքի ընդհանուր ժողով, մասնակցությամբ համայնքի 145 անդամների, նիստին ներկա էր նաև Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակից Վ. Հովհաննիսյանը

ՕՐԱԿԱՐԳ

Լանջաղբյուր համայնքի ղեկավարի 2011թ-ի թվականի ընթացքում համայնքում կատարված աշխատանքների հաշվետվությունը համայնքի ազգաբնակչությանը:

Լանջաղբյուր համայնքի ղեկավար Յու. Բաղդասարյանը ներկայացրեց 2011թ-ի ընթացքում թե՛ համայնքի, և թե՛ դոնոր կազմակերպությունների միջոցներով կատարված աշխատանքների մասին:

2011թ. Լանջաղբյուր համայնքի վարչական բյուջեի եկամուտները նախատեսված են եղել 36284.4 հազ. դրամ, որից հավաքագրվել է 35779.8 հազ. դրամ, որը կազմում է ընդհանուր եկամտի 98.1 տոկոսը: Վարչական բյուջեի ծախսերը նախատեսված են եղել 36284.4 հազ. դրամ, ծախսվել է 32475.8, որը կազմում է 90.0 տոկոս: տնտեսված 3404.0 հազ. դրամ գումարը տեղափոխվել է 2012թ. ֆոնդային բյուջե:

2011թ. աճուրդով օտարվել է համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրի կատեգորիայի 13 կտոր տնամերձ հողամաս:

1 Կազմակերպել է անասնազվխաբանակի հաշվառում:

2. Գարնանացան ցորենի, էլիտար կարտոֆիլի սերմացուի և պարարտանյութի ներկրում և բախշում ազգաբնակչությանը:
3. Վորլդ Վիժն կազմակերպության կողմից տրամադրված տրակտորի միջոցով կատարվել է ազգաբնակչությանը պատկանող վարելահողերի վար, որի աժեքը զգալիորեն ցածր է եղել, շուկայական արժեքից:
4. Բյուջեի միջոցների հաշվին, տարվա սկզբին շուրջ 5003.0 հազ. դրամ գումար է հատկացվել համայնքի տարածքում 3-րդ կարգի ոռոգման ցանցի կառուցման համար, որպես համայնքի ներդրում: Տվյալ ցանցի ընդհանուր արժեքը կազմում է 54.3 մլն. դրամ: Տվյալ ցանցի կառուցման աշխատանքները ավարտվել են:
5. 2011թ. համայնքի տարածքում իրականացվել է խմելու ջրագծի ներքին ցանցի կապիտալ վերանորոգում, շուրջ 700 մետր հատվածի խողովակաշարը փոխարինվել է նորով:
6. Փողոցային լուսավորության ցանցի ընթացիկ վերանորոգում և անխափան շահագործում:
7. Նախադպրոցական կրթության կազմակերպում:
8. Համայնքի բյուջեի միջոցների հաշվին կատարվել է համայնքի դաշտամիջյան և գյուղամիջյան ճանապարհների ընթացիկ վերանորոգում, ինչպես նաև ձմեռային պահպանում և շահագործում
9. Մշակույթային միջոցառումների կազմակերպում՝ Հայրենական մեծ պատերազմի վետերանների մեծարման երեկոյի կազմակերպում, նոր տարվա հանդիսության կազմակերպում, համերգների կազմակերպում:
10. “Արևշատ” բարեգործական կազմակերպության միջոցներով մանկապարտեզում համակարգչային սենյակի աշխատանքների շարունակում:

Համայնքի ղեկավար՝

Յու. Բաղդասարյան